նահատակութեան վայրից ½ ժամ հիւսիս կընկնի, և Խոփուզ գետի աջ ափի վերայ գտնուած է քանի հնութիւններ, հին դրամներ, և ցուլուած փոքրիկ եզան պատկերներ, զորս քրդեր Կարին տարած և վաճառած են։ Անցեալ տարի ևս քրդեր տան հիմ փորելու միջոցին գտած են եկեղեցւոյ հիմեր և արծաթեայ խաչեր ոսկեջրած։

Ուրեմն վերոյ «եկեղեցիս» յոդնակի բառից կերևի որ Սրբոց նահատակութեան վայրերը եկեղեցիներ շինած է, թերևս քանի վայրեր նահատակուած են սուրբերն, որպէս ժողովուրդն ևս կաւանդէ և այդ վայրերը եկեղեցի շինուած է։

Որպէս նահատակութեան մօտ տեսած փոքրիկ գերեզմանատունս, նոյնպէս Ս. Լուսաւորչայ վանքն և Խոփուզայ աւերակներն եթէ խուզարկուին, անհրաժեշտ ապացոյցներ երևան պիտի գան։

ՍՈՒԿԱՒԷՏԻ ՇՈՒՐՋԸ ՊԱՏԱԾ ԳԻՒՂՕՐԱՅՔ

Սուկաւէտ բաւական ընդարձակ և բարձր լեռ մի է, երեսն քայքայուած և փշրուած մոխրագոյն քարերէ կազմուած է, որով բուսականութենէ զուրկ է, չբուսնիր ո և է մի կանաչ. հարաւային կողմէ դժուարամատչելի է, աւազանման քայքայուած քարեր արգելք են վեր բարձրանալու, որոց վերայ կոխողն ստիպեալ է միշտ սահիլ. երեք քայլ առնողն հազիւ մի քայլի չափ բարձրացած կը լինի։ Երկու Սուկաւէտներու կցուած վայրն, երկու կողմէն, ի հարաւ արևելից և յարևմտից մի մի ձորակներ կիջնան, որոց շուրջն կը տեսնուին